


Հ Ա Ս Ց Է
Rédaction du Journal arménien
ARCHAÏCOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԱՐԱԼԵԼ

ՆԳԻՊՏՈՍ
Տարեկան դր. ողջ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան գրանգ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍՏ ԳԵՐՈՒ ՓՈԽԱՐԷԳ
ՎԵՐՈՒՄԸ ԳԵՐԺ ԱՊԻՍ ԸՂԿԱՆ .

Քառս - Ներ - Կարգադրութեան
ՆԳՐԵՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Ձի հրատարակումը ձեռնարկները
ևս չեն տրոխր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ
ձեռնարկները կ'ընդունուին մասնա-
ւոր հաւանայնութեամբ :

Աղբնամարտի Ներկայացուցիչ
Յ. Պ. ՏՈՒՐՈՒՆԵԱՆ
Ռադիսի Բաշա Թ. 67

ԱՁԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԵՐԹ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքակալ խնդրոց հաւատ
պիտի կ'ընդունուին նախագրութեան
ներքին Մասնակարգին, որ կ'

ԳԵՐՈՐԴ ՓԱՓԱԶՆԵԱՆ

40 ՉՐԱՍԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու և 6 իրենց գրածները

ZUSC 40 ՓԱՄ ՈՂՁ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

- 1. - Կարմիրիւն. 2. Կարմիրիւն գոր-
ծեր. 3. - Նպասակ. 4. - Արդիւնք. 5. - Ա.
Բ. Տեղեկագիրներ. 6. - Հախաւարդներ.
7. - Ընկերութեան անցեալը. 8. - Ներկան.
9. - Ապագան. 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը
ընդհանուր գծերով. 11. - Կանոնագիր :

Բ.
40. ՉՐԱՍԱՀԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Նախորդ թիւով հրատարակելով
Հ. Բ. Ը. Միութեան Առե-
նապետ Վսեմ. Պօղոս բաշայի և
Ներքին Գործոց Նախարար Վսեմ.
Մուսթաֆա բաշա Ֆէ՛հմի միջև փո-
խանակուած գրութիւնները, ցոյց
տուինք թէ ի՛նչ հարաւարդէ՞լ ընդու-
նելով ինչ գտած է այն նոյն իսկ Ն.
Գրատարական կառավարութեան առջև:
Այս անգամ կը հրատարակենք
գարձեալ Ն. Վ. Պօղոս բաշայի և
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրա-
պետին միջև այս առթիւ փոխանակ-
ուած գրութիւնները, մանաւանդ
Խրիմեան Հայրիկի հայրապետական
օրհնածիր կոնդակը, որ խիստ սրբ-
տառուէ պարունակութիւն մը ունի:
Անկարելի էր առանց այս եր-
կու կարեւոր տղաբնութեանը նախա-
պէս աչքի առնել ունենալու, Հ. Բ.
Ը. Միութեան գրութեանը ընել:

Պ. Ա. Տ. Ը. Ն.
Ն. Վ. ԱՏԵՆԱՊԵՏ ԲՂԵԱՅԻ
ԳՐԱՌԹԵԱՆ

Ի Վահրէ, 9)22 Մայիս 1906
Առ Նորին Ս. Օձուրիւնն
Տ. Տ. Միւրտիչ Ա. Սրբազնակատար
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի Ս. Էջմիածին
Աստուածարեալ Հայրապետ,
Տանկաստանի և Ռուսաստանի
մեր եղբարց այս վերջին տարիներս
ենթարկուած հալածանքներէն և
աղէտներէն զբաժեալ մի քանի բա-
րեկամաց հետ հիմնեցինք աստ բա-
րեկամական ընկերութիւն մը: Հայ-
կական Բարեգործական Ընդհանուր
Միութիւնն անուամբ:

Միութիւնն որու մարդասիրա-
կան է, և զերծ որեւէ քաղաքական
հանգամանքէ, Կեդրոնն է ի Վահրէ-
րէ, և պիտի ունենայ իր Մասնա-
ճիւղերը հայաբնակ ամեն կարեւոր
քաղաքաց մէջ:

Միութեան հասոյթներն պիտի
կազմուին անդամոց մտից տուրքե-
րէ, բաժնեկրիներէ, նուէրներէ և

կտակներէ: Գոյացած հասոյթից մի
մասն իբր գրամագլուխ ի պահ պի-
տի գրութի գրամատուն մը, և մնաց-
եալն պիտի գործածուի որեւէ առ-
թիւ արկածեալ մեր բնագաւառի
ազգակցաց դրամական օգնութիւն.
Ներ գրկելու, և անոնց նիւթական
ու բարոյական վիճակի բարւոքման
նպաստելու:

Ընդ գոյոյ՝ Ձերդ Ս. Օձուրեան
կը մատուցանեմք Միութեանս Կա-
նոնագրէն և զայն մերազնեից ծա-
նօթացնելու նպատակաւ պատրաս-
տուած շրջաբերական Կոչէն մէկ մէկ
օրինակ, որք մանրամասնօրէն կը
պարզեն գործոյն նպատակն ու կազ-
մակերպութեան եղանակն:

Խոնարհաբար կը խնդրեմք Ձեր
սուրբ օրհնութիւնն վասն յաջողու-
թեան ձեռնարկիս, ի խրախոյս և ի
քաջալեր մեր և մեր աշակցաց:
Մատչելով ի համբոյս որբազ-
նած աշխղ. և հայցելով Ձերդ
Աստուածահաճոյ աղօթքն:

Մնամք ամենախորին ակնածա-
նօք Ձերդ Վեհափառութեան
հոգևոր որդիք:

Ի դիմաց Կեդր. Վարչ. Ժողովոյ
Ատենապետ
(Ստոր.) ՊՅՂԱՅ ՆՈՒՊԱՐ

ՊԱՏՃԷՆ
ՕՐՀՆԱՁԻՐ ԿՈՆԿՐԵՒՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Միջոց ծառայ Յիսուսի Բրիտ-
տուի և աննասանելի կանօն Աս-
տուոյ նպիւրճաբարեալ և Կարո-
ղիկոս Անեանայն Հայոց Մարտիրոս
Պատրիարք Համագրական Նախաձե-
ժար Արքայ Արարեսեան Առաջն-
ական մայր եկեղեցւոյ արքայ Կա-
թողիկէ Էջմիածնի:

Ազնուաշուք Ատենապետի Հայ-
կական Բարեգործական Ընդհ. Մի-
ութեան ի Վահրէ և անդամոց նո-
րին, հարապատից Մայր Աթոռոյս
Նուիրեմք ողջոյն և Հայրապետա-
կան օրհնութիւն:

Հայք որ ըստ բերմանց հանդա-
մանաց տարազիր լեալ ի հայրենի
երկրէ իւրմէ բնակեցան յայլ և այլ
տեղիս աշխարհաց, ընդ ինքեանս ա-
ռին նաև նահապետական գեղեցիկ
սովորութիւն յաշխարհէն Հայոց, սո-
վորութիւն կարեկցութեան առ մեր-
ձաւորս և օգնութեան առ վտարանդ-
եալս: Եւ արդ միութեանք ի սիրտ
երբ զի սովորութիւնդ այդ Աստ-
ուածահաճոյ եկեալ եհաս ի ժամա-
նակս մեր:

Անցք չարաբաստիկք, որք ան-
ցին ընդ սիրելի զաւակունս մեր
ի տեղիս Կովկասու յերեսաց դժխեմ

ազգի, և ընդհանուր պատահա-
համայնից մերազնեից, զի էին՝ որք
անկան և յոյտեցան ի թշնամեաց
և էին որք կողոպտեցան և հասին
առ դրուս ազբատութեան և էին՝
որք լքեցան և աստանդական եղին
ի բնակավայրաց:

Որպէս Հայրապետ լրութեան
ազգիս և հօյիւ բանաւոր փոքու-
հօտիս յաղօթի կայի առ Աստուած
բաւ համարիլ զտանջանս ժողովրդ-
գեան իմ և հայցէի զարդարութիւն
Տեառն և ինձին ժամու ուրախ լի-
նէի և միութեանք ի սիրտ, յորժամ
հեռաւոր զաւակունք մեր ինոյն
վիշտ հարազատից եղբարց իւրոց հա-
մակեալ ձեռն օգնութեան կարկա-
ռեն առ վշտանդեալս, որքս և
այլիս:

Նման այլոց և դուք, Տեա՛րք
պատուականք, իղձ ըզձացեալ էք
Ձերոյսանն դալ ի հանդէս նուիրա-
բարութեան կարօտեցոյ ի վերայ
հաստատուն հիմանց կանոնագրու-
թեան «Հայկական Բարեգործական
Ընդհանուր Միութիւն» վերտառու-
թեամբ, զոր ուշի ուշով ընթերցեալ
մեր և հասու լեալ նպատակաց մէն
մի յօդուածոց այնորիկ, բերկրեցաք
յոյժ:

Բարեգործական Միութեամբ
այդորիկ ի հեռաւոր աշխարհէն Ն-
գիպտացուց փութայք կատարել ըզ-
բարոյական պարտիս ձեր առ կա-
րօտեալ եղբայրսք՝ որք աստ ի Կով-
կաս, վասն որոյ յղելով ընդ կոնդա-
կիս զհայրապետական մեր զօրհնու-
թիւն փասն յարատեւութեան և բար-
գաւաճման հաստատութեանդ և ար-
զիւնաւորութեան լատակաց ձեռաց
ձերոց:

Եղբուք զօրացեալք ի շնորհս
Ս. Հոգւոյն և օրհնեալք ի մէնջ
Ամէն:

(Ստոր.) ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՈՑ

Ի 7 Յուլիս 1906 ամի
և ըստ տոմարի ՌՅԺԵ
ի Հայրապետութեան Մերում ԺԳ.
Սրբարարտեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի ի Վաղարշապատ Թ. 843

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և նթովպիոյ
բաժանորդներէն կը խնդրուի որ հա-
ճին փութացնել իրենց բաժնեկրիներ-
ըն, նկատելով որ փառոյն իններորդ
ամիսը կը թեւակոխենք:

Այսպէսով մեր յարգելի բաժա-
նորդները մեզի խնայած կը լրան մաս-
նաւոր գիմուներու առթիւ ըլլալիք
ժախքերէն և ժամալուծառութիւն-
ներէ:

ՊԵՏՐՈՍ ՀՕՍԵՆԵԱՆ

Տգիտութեան անմուսնալի զոհ,
Արփիար Արփիարեանի վայրագ ըս-
պանութեան հաշուեկշիւը փակուե-
ցաւ ամսոյս 20ին, սպաննիչին կա-
խաշան բարձրանալովք: Գրամագլ-
խատէրն էր Մարգարէթիւնը, զոր
կը ներկայացնէր Հայութիւնը: Գու-
մար, բազմապատկութիւն, բաժա-
նոււ և ին. արդէ՛ւնք. անվերա-
դարձ կորուստ դրամագլխի: Պար-
տապահանջ Մարգարէթիւնը բացը
կը մնայ և ըստընէր կան թէ գոհու-
նակութեանէն կ'աստատէ... ես պի-
տի ըսէի՝ սրտին ցաւէն:

Ինչ որ ալ ըլլայ, ես իմ մա-
սիս հաւասարապէս կողբամ այս եր-
կու կորուստներն ալ, որոնք տա-
կաւին շատ ծառայութիւններ կըր-
նային մատուցանել մեր տարաբազ-
ազգիս և անկէ՛ ամբողջ մարդկու-
թեան: Վասնզի, ինչպէս յայտնի
է, անհատին զարգացումով ազգը
կը զարգանայ և ազգի մը զարգա-
ցումը Մարգարէթիւնը քայլ մը ևս
կը յառաջացնէ դէպի իտեալը:

Արփիար, ինչպէս ամեն ոք գի-
տէ, ստեպ ամպերէ վեր սաւառնող
արծիւ մ'էր զազարիարի. և Պետ-
րոս կախալանի առջև ցոյց տուած
անայլայլութեամբ առիւծ մը յայտ-
նուեցաւ երկաթեայ կամփի: Վաս-
արարածները՝ վատասիրտ կ'ըլլան
առանց բացառութեան: Պետրոսի
նման քաջ մը պիտի կրնա՞ր անպաշտ-
պան ծերունիի մը վրայ ձեռք վեր-
ցընելու անորակելի վատութիւնը
գործել, եթէ համոզուած չ'ըլլար
թէ այդ բանը պէտք էր Հայրենիքի
ազատութեան համար: Իսկ այդ հա-
մոզումը այս թերթին մէջ իմ «ՈՏ-
րին վերջաբանը» յօդուածովս բա-
ւական բացատրեցի թէ ուրկէ կու-
գար: Պէ՛տք է հաս կրկնել թէ՛
մենք զինեցինք Հոսէնեանի ձեռքը
հայրենասիրութեան վրայ մեր սխալ
գաղափարներով:

Հոս հարցում մը: Ի՞նչ անուն
պիտի տանք այս մարդուն. զայն
ալ աննկարագիր, անսկզբունք, հա-
սարակ չարագործներու՝ հետ պիտի
դասենք, թէ ուրիշ տեղ մը պիտի
տանք մեր յեղափոխութեան պատ-
մութեան մէջ:
Անվերջ և փոթորկալից վիճաբանու-

Թեանց տեղի չտալու համար, այս հոգն ալ թող ապագայ սերունդը ստանանէ: Մեր ընելիքը այն թող ըլլայ որ, ալ ասկէ վերջը Յեղափոխութիւնը յետագայ և ազգը վարկարեկող ոչ մի տեսակ տխուր և անիմաստ դէպքերու ծնունդ չտանք: Մարդկային կեանքը նուիրական է, զգուշանանք անոր ձեռք գայրենիէ: Եթէ փոխանակ այս ինչը այն ինչը բամբասելու, մեր խելքը չհասած բաներու վրայ արեւոյտի վիճարանութիւններով ժամապահու ըլլալու, քիչ մ'ալ ճշմարիտ հայրենասիրութեան, համերայխութեան վրայ խօսակցինք, լաւատեղեակներուն կարծիքն ու խորհուրդը հարցնելով դործենք, քիչ ժամանակի մէջ պիտի տեսնենք որ թէ՛ մեր բնակչութիւնը և թէ՛ մեր միտքը անզգալարար փոխուած և մենք ուրիշ մարդեր եղած ենք: Ազգին ալ մեղքընանք, մեզի ալ մեղքընանք:

Տեղական թերթ մը հանրագրութեան մը ձեռնարկ վերագրեց ինծի, Հօսէնեանին ներումը հայցելու համար Բարձր. Խրտիվէն: Ձեռնարկը ճիշդ է, բայց հանրագրութեան սուտ: Չէի կրնար հանրագրութեան դադարարն անգամ փայլալեւ, պատճառաւ մը զոր թերեւս օր մը յայտնեմ՝ մանրամասնութեամբ: Ձեռնարկս, սակայն, արձագանք գտաւ վեհանձն սրտերու մէջ: Ի միջի այլոց Գուրիէ Տէժիթի ամենօրեայ թերթին յարգելի Տնօրէն Մ. Աշքարյանէ, խմբագրապետը Մ. Հ. Բասիլէր սրտաշարժ յողեւածով և մասնակի դիմումներով, ի մի բան թէ՛ իրենց պատուական թերթով և թէ՛ քսակով ըրին ինչ որ մարդկայնապէս կարելի էր ընել Բարձր. Խտիվին գուրագրութեան հիմար խելք մահապարտին վրայ: Յիշեալ վեհանձն պարտներուն, այս տողերով, կը մատուցանեմ իմ և համարողներուս ջերմ շնորհակալիքը:

Շնորհակալիք մ'ալ կը պարտիմ նոյն իսկ Հօսէնեանի, որ իր այս աղեկէզ մահացուցմամբ առիթ տուաւ ինծի մօտէն ճանչնալու և ուսումնասիրելու կարգ մը անձեր, որոնց վրայ անշուշտ պիտի խօսիմ օր մը:

Եւ հիմայ, մեր յեղափոխութեան ամբողջ շրջանին ինկած գրչի, գործի և դադարարի բոլոր նահատակներուն ոսկերց հանգիստ և իրենց հոգիներուն հրճուանք և անխակալութիւն մաղթելով, այս գլուխն ալ կը փակեմ:

Ա. ՊԱԼԵԱՆ

Յ. Գ. Առ Սրբազան Առաջնորդ Հայր Եղիպտոսի. Տասնըհինգ տարիներէ ի վեր թուրքի բանտին մէջ նշան Չիմէնեան անուն մարդ մը կայ. անոր պատմութիւնը եթէ չէ՛ք գիտեր, Եղիպտոսի մէջ չկայ հայ մը որ չԷ իրանայ. կրնաք մէկուն պատմել տալ: Այդ մարդը կուրացած է, կ'ըսուի. հետեւաբար աւելի յարմար

է հիւանդանոցի մը քան տաճանակիր աշխատութեան: Անշուշտ օրին մէկը ան ալ դուրս պիտի ելլէ՝ դամուած չորս տարեակի մէջ: Բայց այն նախախնամական օրէն առաջ, միթէ ա՛յս մարդն ալ գիտումի մը գրանմէքը չ'արժեք:

Ա. Պ.

Ա. Չ. Գ.

Գաւառական Պատկ. Ընդհ. Ժողովոյ որոշմամբ, յառաջիկայ զբոսորդական շրջանին, որ կ'սկսի Ապրիլի 1-ին, Գաւառեան Ազգ. Վարժարանի աշակերտներէն ամսաթոշակ պիտի պահանջուի, նախակրթարանի համար 40 Եդ. շրջ. եւ Մանկապարտէզի համար 20 շրջ. Միջակ կարողութեան տէր ընտանեաց պատկանող աշակերտք միայն կէս ամսաթոշակ պիտի վճարեն:

Իսկ ձրի պիտի ընդունուին այն տղաք որոնց ծնողքը Ազգ. Առաջնորդարանէն վաւերացեալ կարօտութեան վկայագիր մը ներկայացնեն:

Ուստի այն ամեն ծնողք որ իրենց զաւակները Գաւառեան Վարժարանը զրկել կը փափաքին, Օգոստոս 25 էն սկսեալ ամեն օր միջօրէնէն առաջ, թող հաճին իրենց զաւակաց հետ Վարժարան ներկայանալ, Սեպտեմբերի ամսաթոշակը վճարելով զաւակներին արձանագրել տալու համար:

Իսկ կարօտութեան վկայագիր ստանալ փափաքողք թող այժմէն զիմեն Առաջնորդարան, վասնզի առանց սոյն վկայագիր ի ձեռն ունենալու որ եւ է տղայ իբր ձրի չպիտի ընդունուի վարժարան:

Ամսաթոշակները կանխիկ վճարելու են, ուստի ամսոյն մինչեւ 8ը ամսաթոշակը չվճարող աշակերտը վարժարան չպիտի ընդունուի:

ԿՆԻՔ

Գահիրէ 28 Յուլիս 908

ՆԱԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ

ԿԻՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

— Բ. —

Տեսնաք թէ կնոջական գործունէութեան ամենէն բնական սահմանը տունն է, օճախը, հայրենի անուշ հրդեհը եւ ինչ որ կայ անոր յարակից իր դերը իրեւ թոր, ամուսին եւ մարդահա իր ամենէն բնական վիճակը եւ այն զսնազան փուլերը որոնցմէ կոչուած է անցնելու: Բայց դժբախտաբար մէկէ աւելի եւ բազմակողմանի պատճառներ բաւականին փոփոխութիւններ մտցուցած են այս բնական ճամբուն մէջ: — «Քո սահմանը տունն է, ջանս երջանիկ ընելու ամուսինդ, կրթէ՛ դաւակնիրդ եւ պատրաստէ զանոնք օգտակար անդամներ ընտանիքիդ եւ հայրենիքիդ եւ եթէ այսքանին մէջ յաջողիս արդէն կատարած կըլլաս զերդ:» Բայց այս կարենալ ըսելու համար կինը ունենալու է իր ամուսինը, զերծ մնալու է արտաքին աշխարհի մտահոգութիւններէն, մետաղին հոգէն — մետաղը՝ որուն հակառակ անարդ անակունք գրուած ըլլալուն միակ միահեծանն է հողագործի վրայ, եւ որպէս զի կինը կարենայ իր ամբողջ ուշը ուրուշը տալ քիչն մեծագոյն արդիւնքը ձեռք բերելու գործին մէջ, պէտք է որ ատաղձը տրուի իրեն, պէտք է որ միշտ հայթայթով մը ունենայ ինք:

Ինչ որ ալ բանաստեղծները երգեն, եթերին մէջ սաւառնելէ առաջ պէտք է զբաղել նիւթովը՝ որը հակառակ բիրտ ըլլալուն չի դադարի գործարար իրականութիւն ըլլալէ: Եւ հարցը որ իր մերկացեալ ձեւին մէջ կը ներկայանայ մեր առաջ սա է — «Ինչ ընելու է կին մը երբ հակառակ իր բուրք կամքին միայնակ կը գտնուի այս աշխարհի մէջ. եւ կամ չունի մէկը որուն կարենայ կրթիլ իր նեղ օրերուն կամ ունի պարագաներ որք սակայն իրեն հանգէպ կատարեալ անտարբեր են. կամ խառնուածքի հետեւանքով չ'ուզեր ամուսնանալ. կամ ստիպեալ ամուսնի մ'է. կամ որք մը, բաղտին մէկ զրկեալը. կամ արգելաւ արգելեալ պտուղի նոյն իսկ զլուսուած է իրեն վայելելու ճնողական գուրգուրանքը եւ ընկերային անմիկնելի սովորութիւնը ծնած վայրկեանէն իսկ ճակտին վրայ կը դրոշմեն դատապարտութեան խառնը, ջաւուրեան նոխաղ մը չի գործած մէկ յանցանքին, ընկերութիւնէն արտաքուստ մ'է. եւ կամ այրի մ'է զաւակներով ծանրաբեռնեալ: Եւ այն տունն այս բոլոր պատահականութեանց մէջ սա անուոր հարցումը կ'ընէ ինք իրեն — «Ինչ ընելու եմ պատուաւոր կերպով օրապահիկս ճարելու համար:»

Այս պատահականութեանց առաջ որք գործադատար ցանցառ ալ չեն կինը անպատրաստի չի գտնուելու համար պէտք է ստաջին օրէն պատրաստութի հարկին իր օրապահիկը պատուաւոր կերպով իր սեպակահան ուժերովը ճարելու. բնականաբար իր աչքը պիտի պտտուի սուսնէն դուրս իրեն յարմար ասպարէզներու վրայ. բանտրական սոխարհին մէջ գործաւորներու մօտ կազմուեցաւ գործաւորութիւնը դասակարգը. շուկան, կառավարական վարչութիւնը — որպէս է նամակատան վարչութիւնը — եւ գլխաւորաբար զեղարուեստը իրեն հայթայթեց թէ՛ գործունէութեան եւ թէ՛ ապրուստի ընդարձակ ասպարէզներ:

Կնոջական ազատագրութեան հարցով զբաղողներու խումբեր կեանքի մէջ իրենց ճամբայ բանալու համար սկսան պայքար մղել կարգ մը հին արմատ ձգած սովորութեանց դէմ. ուրիշներ սկսան քարոզել հարեմական գրութեան դէմ, թէ կինը չէ լոկ գործի մը հաճոյից, պէտքի անօթ մը՝ որ քաջութի աշխարհի թատերաբեմին երբ կորսուցնելու ըլլայ իր հրապոյրը, ալ ինք հողի ունեցող արարած մ'է մտաւոր, իր դերը ունի մտաւոր աշխարհին մէջ, եւ իր այդ մտաւոր վիճակը բոլորովին անջատ է իր մարմնական զեղէն շընորհէն:)

Ըսել է, ըստ իս. Ֆէմինիստներու պայքարը ըլլա՛յ իրենց ակամայ ամուրիութեան մէջ օրապահիկին ճարելու միջոցներուն վրայ, ըլլա՛յ գլխաւորաբար հարեմական գրութեան մէջ կնոջ սարուկ իբրեւ գործի հաճոյից դէմ. շատ բնական կը գտնեմ:

Ֆէմինիստներու վարդապետութեան մէջ կայ բարոյացուցիչ կէտեր, օրինակ, կ'ուզեն որ ամէն աղջիկ իր ծախքերը ինք հոգայ եւ ամուսնանալու պարագային բեռ չըլլայ իր ամուսնոյն: Թէպէտ առ այս այն սեռակառաջարկութիւններն ալ կ'ընեն որ շատ նպատակայարմար չ'երևիր, ինչպէս ի միջի այլոց կ'առաջարկեն, որ կինն ալ ամուսնոյն պէս առաւօտուն իր ուրոյն զբաղուիլին, իրեն յատուկ գործատեղիներ իր վրայ, եւ ըլլա՛յ իր անչափահաս սողը ըլլա՛յ առանին գործերու հոգը յանձնէ մասնաւոր վճարեալ անձերու:

Երբ կին մը իր գոյութիւնը պահպանելու համար ապրուստի նորանոր միջոցներու, նորանոր ասպարէզներու

վրայ կը խորհի, շատ բնական բան մ'է: Բայց ամէն խուզարկում պէտք է մը համապատասխանելու է. հոն ուր պէտք մը չկայ՝ խուզարկում իր գոյութեան իրաւունքը կը կորսնցնէ. այս դատակարարէն է ընդհանուր քուէարկութեան իրաւունքի խնդիրը. եւ չեմ կրնար ըմբռնել թէ այս սեռակ հարց մը կնոջական ինչպէտքի կը համապատասխանէ. կնոջ տունէն դուրսի վեճակը, ինչ որ ալ ինչպատ իրեն ըսուի, անբնական վիճակ մ'է, բայց քանի որ նիւթականի գոյութեան անհրաժեշտ պէտք մը կայ՝ միայնակ մնացող անթեւ անթիկունք, բաղձ զրկեալներու համար, որով այդ պէտքին համապատասխանող նոր վիճակ մը ստեղծելով. եւ այդքան միայն:

Եթէ միայն այս ըլլար Ֆէմինիստներուն ուզածը ոչինչ պիտի գտնէի տարօրինակ. բայց ասոնք կը պահանջեն այն սեռակ բաներ որ կնոջ մը համար ունի կապ չունի, որպէս քաղաքական գործերը: Եւ կը պահանջեն այն սեռակ բաներ որ բոլորովին աւընդունելի է: Եւ ստուգելու շատ զարմանալի են, խօսքս ծայրայից Ֆէմինիստներուն համար է: Ասոնք կուզեն իրենց վերագրանք կեանքին վարդ կողմերը եւ թողուլ այրերուս տատակը միայն: Այն աստիճան որ՝ եթէ ամենաթեթեւ հնարաւորութիւն մը ըլլար չի պիտի վարանէին առաջարկելու որ այրերու բաժինի կը թողուն յղութիւնը բայց զիտեն թէ բնութեան օրինաց դէմ ոչինչ հնար չէ, այդ պատճառաւ ստիպուած են ակամայ կրել իրենց բոնապատեալ մայրութիւնը:

Եւ այն Ֆէմինիստները որք ընդհանուր քուէարկութեան իրաւունք կը պահանջեն՝ չափուած լուծիւն մը կը պահեն զինուորագրութեան վրայ: մինչդեռ արգար ըլլալու համար իրենց պահանջին մէջ պէտք է հաւասար չափով կրեն իրենց ինկած բաժինը զինուորագրութեան մէջ. եւ ինչպէս էրիկ մարդը երկրին հայրենիքին պաշտպանութեանը համար կը տոկայ ամէն կերպ զժուարտութեանց, ի հարկին կեանքն ալ վրայ տալով. նոյնպէս եւ Ֆէմինիստները պէտք է որ իրենց պահանջած հաւասարութիւնը գործնական հոշով մը վրայ դնելու համար թողուն շրջազգեստ ու այն ամէն փետուրները որք չես գիտեր ինչու եկած տեղաւորուած են գլուխներնուն վերեւ, եւ ուսերնուն վրայ ստանն հրացանը եւ փամբուշտը եւ պահ մը մանակցիկն ուղղամփորձերուն, փորձը իսկ բաւական պիտի ըլլար իրենց տաքցած գլուխները շուտով հանդարտեցնելու:

Նոյնպէս Ֆէմինիստները կուզեն որ ներկային մէջ այդ մարդուն կնոջ նկատմամբ ունեցած մասնաւոր յարգանքը նոյնը մնայ եւ միշտ եւ ամենուրեք, եւ միւս կողմանէ պահելով իրենց նոյն դիրքը աւելցնեն եւ ատոր վրայ էրիկ մարդուն ունեցած եւ իրեն ուրոյն ատուութիւնները. սա պարզ պատճառաւ որ այդ պարագային հաւասարութիւն անուսով անհաւասարութիւն եղած պիտի ըլլար. կնոջ ներկային մէջ այդ մարդուն կողմանէ վայելած մասնաւոր յարգանքը ուրիշ բան չէ այլ սեռակ մը փոխարինութիւն իր կարգ մը ասպարէզներու մէջ ձայն չունենալուն: Իսկ այն պահուն որ Ֆէմինիստները կուզեն ոտնձգութիւն ընել արանց յատուկ ասպարէզներուն մէջ, պէտք է մտքերնին դնեն թէ այդ պարագային էրիկ մարդը իրենց հետ պիտի վերաբերուի այնպէս ինչպէս որ կը վերաբերուի արդէն իր մէկ սեռակիցին հետ. եւ արդէն արբեր կերպով շարժելու ալ պատճառ մը ունի:

Եւ ասոր մէջ ո՞վ պիտի ըլլայ տուժողը. կը բաւէ ըսիւր թէ՛ Ֆէմինիստք

ները իրենք իսկ վերջին աստիճան մը տանող թիւան մը մէջ կը գտնուին, եւ իրենց այդ հոգը քողարկուած կերպով կը յայտնեն եւ կը ջանան, թէպէս ի գուր որ փոթորիկը չի պայթի: «Կի- նը, կըսեն, հրապարակի վրայ այդ մարդուն արտասանը չէ, այլ անոր օ- ժանդակը»: Եւ կոչուին որ էրիկ մար- զը իրենց հետ պայքարին մէջ շարժի այն կնամեծարութեամբ ինչպէս որ կը շարժէր, օրինակի աղագու, նուազա- հանդէսի մը, թատրոնի մը եւ կամ պարանոցի մը մէջ: Բայց ասի ան- կարելի է, համահասարակութեան քա- ռոզող ֆէմինիստը մը պէտք է հրապար- կակ ինչոնցէ այդ մարդուն համահասա- րար ոյժ մը, եւ արդէն բաւերու շուրջ զանազան աւելորդ է, երբ կեանքի մէջ էրիկ մարդը իր մօտ կը առնէ: յանձին կնոջ, ոչ թէ ասն տիրուէն, ոչ թէ զաւակաց մայրը եւ անոնց անօրին կրթ- թիւնը այլ իր մրցակիցը, շահերու բող- խումը անխուսափելի է, այդ պարա- զային անոր հետ բնականաբար պիտի շարժի այնպէս ինչպէս որ պիտի շար- ժեր իր մէկ սեռակիցին հետ:

Եւ հիմա կը հարցնենք թէ ո՞ր պի- տի ըլլայ այս բողոքումին մէջ տուժու- զը: Տրուած ըլլալով կնոջ կազմաօ- ռական բնախոսական ընդհանուր վի- ճակը, աչքի առաջ ունենալով վերջի գրեթէ կէս դարու շրջանը - քանի որ արդէն այս հարցը աւելի հնութիւն մը ալ չունի - կրնանք հետեւ ցնել թէ՛ ֆե- մինիզմը այնպէս ինչպէս որ կրնանք ասանք կ'ըմբռնեն եւ կ'ընէ շարունակէ իր նայն ուղիին մէջ, պահ մը ենթադ- րելով թէ յաջողի, այդ պարագային ասոր անմիջական հետեւանքը պիտի ըլլայ լափտի հարուած մը որ հիմնադա- սակ պիտի ընէ ինչ որ ունի կնոջա- կան աշխարհը զի թիւ հրապարակի իր զեղին շնորհին մէջ իբր կին եւ իբր տանտիրուհի եւ որ միշտ կազմած է իր միակ իրական ուժը: Եւ այդ ուժին փլատակներուն վրայ ինչ չէնք պիտի կրնայ բարձրացնել կ'ընէ որ իր ունե- ցած կորուստը փոխարինէ: Ոչինչ:

Ասկից առաջ կանանց ընդհանուր քուէարկութեան իրաւունք ձեռք բերե- լու համար Անգլիոյ մէջ կրնանք բող- կացեալ մեծ միջինի մը տեղի ունե- ցաւ, արդէն այս քուէարկութեան խնդ- րոյն համար ամենէն աւելի Անգլիոյ մէջ է որ կրնանք ազմուկ կը հանեն:

Առաջը կ'ընէ - «Գերմանուհին իր աղջիկը խոհանոց կ'իջնցնէ, Ֆրանսու- հին իր աղջիկը թատրոն կը ասանի, իսկ Անգլուհին իր աղջիկը եկեղեցի կ'առաջնորդէ»: Ասի զուրս ցայտեց- նելու համար երեք ազգերու գլխաւոր յատկանիշերը:

Գերմանուհին աւելի կը զբաղի իր խոհանոցովը եւ լաւ պատրաստուած համադասները ընտիր սեղանը, ապա- հով միջոցը համարած է իր ամուսնոյն վրայ ազդելու: չէ՞ մի որ արդէն գոն ստամոքս մը բաւական բան մը կը նը- շանակէ:

Ֆրանսուհին ունի իր թատրոնը, պճնումը ու նազանքը: Իսկ Անգլուհին որ մինչ հիմայ պինդ բռնած էր - գէթ արտաքին կրեւոյթին մէջ - իր եկեղե- ցին ու Ս. Գիրքը, կ'երեւի թէ ասանք այլևս պէտք եղած ուժը իրեն չեն տար հեղինակաւոր ձայն մը ունենալու հա- մար հողեղին պիտաւոր արարածներուն վրայ, եւ չի կարենալով վստահել ի- րեն մարմնական շնորհին ալ վրայ, մտադրած է բերս (?) ուժով ձեռք բե- ընլ չես զիտեր ինչ մը:

Բայց բարեբախտաբար անգլիոցի կարգ մը կանանց այս ցոյցերուն փո- խարէն նոյն ժամուն իրենց երկրին մէջ ծանօթ առաջնորդող կրնանք բող- կացեալ խաչակրութիւն մը երեւան ե- լաւ, հակընդդէմ մարմին մը, առժա-

մապէս սա անուան ներքեւ - The nati- onal women's antisuffrage association: Եւ ասոր մէջ ամենէն աչքի գործող կէ- ար սա է թէ՛ այս հակընդդէմ մարմինը կ'ընէ եւ իրաւամբ կանայք մեծապոյն պարագաներու մէջ պարզապէս իրենց էրիկ մարդոց արձուգանքը պիտի ըլլան, այդ պարագային քուէարկութեան ա- զատագրութիւնը աւելորդ է: Ուրիշ պարագաներու մէջ անհամաձայնու- թիւնը կրնան առաջ գալ ընդդիմու- թիւնէ, եւ այդ պարագային շնտարակար է:

Հիմա պիտի հարցուի - «Ո՞րն է կնոջական հարցին լաւագոյն լուծու- մը»: »

Ըստ իս խեղալ լուծումը կը կա- յանայ ամուսնութիւնները բողոքացնե- լուն մէջ, ու այդ միջոցներ խորհիլ եւ մէջ անդէն բանալու ջանալ եղած խոչնդոտները, վերադարձնել կինը իր բուն իսկական գլխաւոր միջնորդին՝ ասն միջնորդին մէջ, հոն է կատա- րելիք իր դերը, եւ կ'ընէ այդ դերին մէջ ունէ զրկանք մը կ'ըլլուի իրեն՝ բողոքի ձայն բարձրացնելու եւ տալ իրեն լիազոր եւ զիտակից իշխանութիւնը որպէսզի իր դերը կարենայ լիուրի կա- տարիլ:

Ընդհանրապէս ակամայ ամուսնու- թիւնը կնոջ համար փորձանք մ'է: Այս փորձանքին զարմանն է յարմար ամուսնութիւնը, եւ ամուսնութիւն- ները բազմացնելու համար ալ լաւա- գոյն միջոցն է մէկ կողմանէ՝ ընտա- նեկան բնեքը թեթեւցնել - հոս բնա ըսելով կ'իմանամ աւելորդ բնեքը, ինչպէս անտեղի արգելադրեր եւայլն, ասի ալ կնոջ ձեռքն է, եւ միւս կող- մանէ՝ օրինական ձեռք մը մէջ մտնու- նել ամուսնական կապը, որոշ գծել տմուսնական պարագերը, իրաւունք- ները եւ նա մանաւանդ ապահարգանքը:

Ամուսնութիւններու բազմացման համար ամէն երկրի իր խորհրդակցու- վը միջոցներ ձեռք կ'առնէ. անցեալ- ները թերթի մը մէջ կը կարգայ թէ Չիքակոյի եկեղեցիներէն մին - Christ church - կցած է եկեղեցոյն սիրաբա- նութեան սենեակ մը - Courting room - աւելորդ է ըսելը թէ հարկ եղած հան- գըստութեան թիւնը արուած է սենեա- կին որպէսզի իր նպատակին կարենայ ծառայել, եկեղեցոյն երէցը խօսելով ըսել է ի միջի այլոց թէ՛ կրտստարդ- ներուն պէտք եղած զիրութիւնը պիտի տրուի այս անմեղ գրօսանքին համար:

Ամերիկեան եկեղեցիներէն շատե- րը արդէն ունին եղբր իրենց ընկերա- կան խօսարանները - Social parlours, հիմա պիտի ունենան հետզհետէ իրենց սիրաբանութեան վայրերը:

Փրկութեան բանակին պէտին, հրամանատար Պուլի, կարծեօք կ'ընէ ոչ բացարձակապէս ստիպելու է ամուս- նանալու՝ գէթ բոլոր ամուսնութեան վրայ սուրբ մը գրուելու է: Ես ընդ- հակառակը կը կարծեմ թէ՛ ունէ ճնշիճ գոյն ունեցող գրութիւն իրմէ սպաս- ուածին հակառակ արդեւեքը կուտայ: Մէկ խօսքով ինչորոյն ամբողջ գաղա- նիքը կը կայանայ տունը - օճախը - քաղցր ընելուն մէջ:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ
(Շարժակալի)

ՆԱՄՍԿ ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

ԻԶՍԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ
ԱՍՏՈՒԾԱՅՈՒՄԸ

Սահմանադրութիւնը թէ և քիչ մը ուշ բայց և այնպէս խանդավա- ցոյցերով Երուսաղէմի մէջ ալ կա- տարուեցաւ, Յունի 24 էն սկսեալ (հին. տոմ.) քաղաքիս կառավա-

րիչը Ալի-է-բրամ պէյ, պատկանո- զական կուսակցութեան պահպանե- լուն չ'էր արտօնէր որ տարիներէ ի վեր բանակալութեան լուծին տակ ճ'չուղ ժողովուրդը, օրին կատա- րէր Սահմանադրութեան, ազատու- թեան և հաւասարութեան տօնը, սակայն ժողովուրդը ալ չը հան- գուրծելով բանապետութեան՝ բա- ջրեց և լսելի ընել տուա իր բա- ջրքը. կառավարչին հետ շատ մը հին գլուխ պաշտօնեաներ պաշտօ- նանկ եղան, որով հասարակութիւ- նը ալ աւելի ուրախ ամբողջ ինք օ- ըրեր ցոյցեր կատարեցին, հազարա- ւոր ժողովուրդներ ամեն դասանան- քէ և սեւեէ, թափուր կազմած փո- ղոցէ փողոց երգելով, պարելով, և ըն. և ըն. կը պարտէին, երեք օ- րեր ալ լուսավառութիւն եղաւ և բազմաթիւ ալ ճառեր արտասանուե- ցան ամեն լեզուէ, մէկ խօսքով ամ- բողջ քաղաքը ուղեւորութեան մէջ էր այդ քանի մը օրերը:

Ինչպէս ամեն տեղերու և ամեն կարգի բանտարկեալներու և աք- սորեալներու ազատութիւն շնորհուե- ցաւ, այսպէս ալ այդ ազատու- թիւնը վերջ տուա Իզմիրեան սըր- բազանի 12 տարիներու աքսորի կեանքին, թէ և իր աքսորի կեանք- քը չէր նմանէր սերիշ աքսորեալ- ներուն որ կամ բանտերու մուկ խորշերուն մէջ շղթաներու տակ կը հեծէին և կամ բողոքողին հեռի անմարգաբնակ վայրերու մէջ իրենց թշուառութիւնը կ'ողբային հայ- րենեաց ազատութեան սիրոյն այն կենդանի նահատակները, Իզմիրեան սրբազան Երուսաղէմի վանքին մէջ լ ամենէն պատուական տեղը իրեն բնակութեանը յատկացուած էր 3-4 սենեակներէ բաղկացեալ յարկաբա- ժին մը, միւս կողմէ 20 օտմ. ու- կի աէրութեան կողմէ ամսական կառնէր կանխիկ, բաց աստի դուր- սէն ալ առատ առատ նուէրներ ան- պակաս կընդունէր. այնու ամենայ- նիւ շարունակ դժգոհութիւն կը յայտնէր թէ՛ «չքաւորութեան և նկուղներու մէջ կեանքս կ'սպառի»: այսու հանդերձ երբ վերջերս հրա- ման եղաւ երթալու, ա'լ երթալ չէր ուզեր, և նոյն իսկ գիվանե- ցաւ միտքան ալ ընդունուելու: Օ- գոստոս 1 ին (հին. տոմ.) միաբա- նութեան կոչնագրեր զրկուեցան հե- տեւեալ օրակարգով: - Առաջարկու- թիւն պատրիարքական, ասանկ օ- ըսակարգ մը միտքանական կանոնա- գրի արամադրութեան հակառակ էր վանքի կանոնագիրը կը արամագրէ որ օրակարգի խնդիրը բացորոշ կեր- պով 24 ժամ առաջ ծանուցուի միա- բանութեան, որ միաբանները պատ- րաստուած ներկայանան ժողովի, հետեւաբար ասանկ յանկարծակի և քօղի մը տակ ծածկուած «առա- ջարկ» մը բուլբուլին ապօրինի էր, այնու ամենայնիւ, նման առաջարկ մը միտքանութիւնը աւելի հետա- քրքրեց և հետամուտ եղաւ զիտ- նալ անոր գաղտնիքը. և ժողովի գումարուելէն քանի մը ժամ առաջ յայտնուեցաւ, թէ՛ Իզմիրեան սըր- բազանը ոմանք կուղեն միաբան ըն- դունիլ անտարակոյս իր հաւանու- թեամբը. այս լուրը որ կը լսեն Դատիթ, Պետրոս և Մովսէս վար- դապետները՝ սոսկալի կը յուշուին. և խիստ միջոցներ ձեռք կառնեն միա- բանութիւնը համոզելու որ քուէ չը տայ, բաց աստի ամենամարդ ա- ծականներ կուղեն Իզմիրեանի «թէ ո՞ր է այն... որ միաբան ընդու-

նինք. նա ինքն չէ՞ր, որ վանքը տակն ու վրայ դարձուց, միաբա- նութիւնը պառակտեց» և ըն. և ըն. Իզմիրեանի արբանեակները Մա- թէոս և Մեսրոպ վարդապետներ, տեսնելով թէ չը պիտի յաջողին քը- ուէ շահելու, և վերջինը շար քան զառաջին պիտի ըլլայ, իսկոյն ո- րոշուին կը փոխեն. երբ ժողովը կը բացուի Պատրիարքը ձեռքը թուղթ մը կը ներկայացնէ տեսնուպետին, ատենապետը կը կարգայ հետեւեա- լը. «Վեհ. Սուլթանը իր բուլբու հը- պատակ ազգերուն ազատութիւն չը- նորհեց բանտարկեալները և ըն ա- զատեց. այս առթիւ միաբանութիւ- նը կը յօժարի՝ որ հաւաքաբար շը- նորհակալութեան գիր մը զրկենք յոստ Կայսեր: այս առաջարկը ամ- բողջին ծիծաղը շարժեց. ինչու որ քաջ զիտէր թէ էնթերք մ'էր այն այնու ամենայնիւ յոսակայն ընդու- նեց և ժողովը ցրուեցաւ, և ահա այսօր 6 օր է տակալին շնորհակա- լութեան կամ երախտագիտութեան գիրը պատրաստուած չէ, և պտու- րաստուելիք ալ չունի: Բայց մենք խորապէս կը ցաւինք որ Իզմիրեան սրբազան 12 տարիներ իր շուրջը հա-ւաքեց քանի մը հացկատակներ, ա- նանկներուն խորհուրդ տուաւ և վանք- քը այս աննախնայելի վիճակին հաս- ցուց և հիմայ ալ անանկներէն նոյն իսկ... կը կոչուի. կը ցաւինք որ տակալին իր բարեկամն ու ոչ բարե- կամը չը ճանչցաւ, որ կը զիջանի միաբան ընդունուելու և վերջը այս- պէս կը մերժուի. ինչ պէտք ունէր միաբան ընդունուելու, քանի որ մեծ ժողովրդականութիւն մը շահած է դուրսը, և ովսանաներով պիտի ըն- ընդունուէր հանրութեանէն:

Վանքն ալ վերջին պատիւ մ'ըն- ծայելու զիտուեալ, ամսոյս 3 ին սե- զան մը սարքեց և այն սեղանին հրա- յիրեց քաղաքայի երեւելի ազգային- ներէն գտտ նաև 12ի չափ թիւրքեր, սեղանին վրայ քանի մը հայերէն և թուրքերէն նաև արաբերէն ճառեր յօսեցան, ամենքն ալ նուիրուած էին նորին Սրբազնութեան, ամենէ վերջ ժառանգաւոր աշակերտ մը ելաւ քանի մը ուսուցիկ խօսքերով անկապ նա- խաղասութիւններով ըսներ մը խօսե- ցաւ և յանդիմորէն այնքան առաջ գը- նաց որ նոյն իսկ աստուածացուց, օրի- նակ իր բաւերով արու նմանցնեմ այս մարդը (Իզմիրեանը) եթէ ոչ աստուած մը և անկէ շնորհ խնդրեմ, ք դարձ- եալ « փառքի բարձունս աստուծոյ, փառք Իզմիրեանի: Նոս ալ դարձեալ կը ցաւինք, որ Իզմիրեան սրբազան եր- բեմն ողջախոհ քարոզներ կուտար, կրօնի նախանձախնդիր կը ներկայա- ցնէր ինքզինքը, այս պարագային լուռ ու մունջ կընդունի, և պարզ գի- տողութիւն մ'իսկ չընէր անանկ ան- վայելով խօսքերուն, ո՞վ ընթերցող տես և մի գարմանար թէ՛ մարդիկ որ- քան փառասէր և ունայնամիտ են, որ եթէ գրեմք աստուածացնես և երկրպագութիւն ընես կընդունին ու չեն մերժեր. բայց ես չեմ կարծեր թէ ամենէ ազատամիտ աշխարհակա- նին տալու ըլլաս նման մակդեր մը ըն- դունի. տես որ ինքզինքը կրօնի ամե- նէ նախանձախնդիր ներկայացնող ե- կեղեցականը սիրով կընդունի աստ- ուածանալը, և շնորհք բաշխելու կա- րող կը կարծէ ինքզինքը:

Երուսաղէմ ԳեղԱՄ

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ս Ո Ւ Թ Է Ն

Աստիճակ 22. 8. 908

Յարգելի Տիարք

Ստորագրեալն, թեթեւութեան դէմ Ձեր տածած օրինակելի դաստիարակչական կրթական ինքնի, որ պիտի բարեկամիք Հիւրընկալել « Արշալոյս » ի մէջ, ներփակ յողովարար:

Ձերդ եւնի, ԱՒԵՏԻՍ ՄՍՇԼԱՔՃՅԱՆ

ՍՏՐՈՒԿ ԲԵՐԱՆՆԵՐ

Անվերապահօրէն կուրախանանք թուրքի մէջ ազգի ունեցած բարեւորական նախաքայլի հանդէպ:

Կը յուսանք որ սովոր, ամուր անկեղծ քայլեր անխորտակելի պատանէջը պիտի հաստատեն անխախտաց արհաւիրքներու, կարելի խոշտանգումներու հանդէպ:

Կը յուսանք թէ տածելի կառավարութիւնը չպիտի յատկանշուի ալ « բարբարոս, կառավարելու անընդունակ » մակդիրով, զոր, սակայն իրենք արդարացողս իրենց առյուծեղանակ արարանալի գործերով:

Սարսափի մղձաւանջին տակ դեռ տուայտուն տարազիւ հայր բնական է որ հեռու հետաքրքրութեամբ հետեւի իր Հայրենիքին իրադարձութեանց:

Պոլսոյ եւ Իզմիրի թիւթեր եւ յաւելուածներ բերկրապատար լուրերու հետ սակայն սարսուռ մըն ալ կ'առաքեն մեզ, այսպէս:

Արեւելեան Մամուլի 25) 7 օգոստոս թուակիր յաւելուածը քստմնելի կեղծաւորութեան, քասքնելի ապերաստութեան անամօթութիւնը բերուած մեզի:

Պարոնին մէկը ընդմիջելով յարգելի բանախօսին՝ Տիար Ս. Դաւիթեանի այնքան պատշաճօրէն բաժնի խօսքերը, անխիղճ եւ անպատկառ « հէլալ օլտուն գանձմը » կը բղաւէ:

Արդեօք Պ. Ճեօթէրտին մատը արեւնաձէր սարսափի երկարատեւ շրջանին մէջ, արդեօք գէթ իր հաւը խոշտանգուած էր սուրիններու անարկու ելեւէջներով:

Ահ վատութիւն, ո՛հ ստրկութիւն ահ աննամուս կեղծաւորութիւն:

Որո՞նք արեւնը հէլալ կընես կոր պարոնս եւ ինչո՞ւ:

Որովհետեւ կեցցեն հայրը կը բացազանջեն:

Որովհետեւ քանի մը սպաններ Առաջնորդարան կ'այցիկեն:

Որովհետեւ անցիկ անիրաւութիւնը կ'դատապարտեն:

Որովհետեւ տոսնց արիտուրի շընորն մըն է:

Որ « ազատութեամբ կեանք կուտան, Որ « հաւասարութեամբ աստղակ » կուտան:

Որ եղբայրութեամբ իրենց հաւասար դիրքը կը բարձրացնեն Հայրը:

Պարոն, Յարգելի Վասիլը պէյ ինչ ըսել կուզէր սա զգուանք - ձողկուծի բառերով:

« Հոս չեկամ, միայն չէր անցնէր որ մեր հայ եղբայրները ասանկ փառաւոր ցոյց մը ըրէր եւ ասանկ գեղեցիկ զարդարանքով հանդիսարան մը պատրաստէր են . . . միտքէս չէր անցնէր որովհետեւ դրոշմի եւ կղզայի թէ Առաջնորդութեան այս օրերուն մէջ երբ մենք այս ուրախութիւնը կընենք, անդին քանի Հայ մայրեր կային որոնք իրենց հաստակուած գուակներուն սուգը կը բռնէին, քանի քանի քոյրեր կային որոնք իրենց նահատակուած եղբայրներուն վիշտը կուլային: Սուգի մէջ պիտի ըլլային Հայերը ապահովաբար, սուգի տունէն էր որ այցիկեցինք » ինչ ըսել կուզէր կոր Վասիլը պէյը, ինչ: Այս աղօթքը սպասկին սպաւորութեանը տակ կ'զգուած պապանձելի լաւ չէ՞ր փոխանակ անպատեւելու արիւնը ցեղիդ, ու նկարագիրը ազգիդ:

Յարգելին Դաւիթեան հիանալի

փափկանկատողութեամբ պայման կը դնէր մտնալու համար « երկրի վրայ թափուած արդար արիւնը » բայց զուր սարսուկի անպատկառութեամբ, փութկոտութեամբ « հէլալ օլտուն գանձմը » կը պօսաք:

Հէլալ օլտուն գանձմը. . . Ո՛վ էք դուք, եւ ինչ արիտուր սպանովուած է մեզ ըսելու համար:

Հէլալ օլտուն գանձմը: Կեր եւ ապա զոհացիր:

Եթէ թուրք զօրքերը թիկնապահը չըլլային իւրեանին:

Եթէ սուրինները ընկրկող ամբոխին ճեղքերուն ընդմէջէն չցցուէին անվահեր ինքնապաշտպանութեան դէմ, անպատրաստ ու բարեմիտ հայր այսքան չէր ջարդուէր:

Փողով հրաման արուեցաւ զօրքերուն յարձակելու Հայոց վրայ: Հիւ՛մի փաշան լաւ գիտէ:

Ուստի, Գերարդելի Պուզլին պիտի ներքէ անշուշտ երբ տարօրինակ եւ անյուսալի նկատենք իր գնահատումը:

Սքեմը քանանայ չընէր: Համազգիտիւն մէջ պարտուած է Ահմէտ, Հասանը որ մտնանդ է, որ ազէտ է, որ ստեղծ է, որ յափշտակող է, կեալուր մեղացնելու, խօշտանգելու, կողպակելու, սեւնջազող է . . .

Գէթ աշխարհային բարօրութեան համար:

Հայրը զօրք փնտնեցին դահիճներ գտան սուրնաղար:

Ու այսօր ապա դահիճները կը զովարանուին, նկարագիրի սէր կը հոշակուին Հայ բերաններէ:

Ո՛վ ժամանակ, ո՛վ բարք:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Կ. Պոլսոյ 19 Օգոստոս: - Մեծ Եպարզոք եւ Թէֆլիզ բաշա Ստիվին այցելութիւն տուին:

Կ. Պոլսոյ 20 Օգոստոս հեռագրեալ երեւան կուզայ որ ասանց արիւն թափելու կատարուած թրքական յեղափոխութեան պատճառներէն մին Ֆրանս-Մասսններու խիստ կարեւոր գիր մը կատարած ըլլաւ ընէ:

Կ. Պոլսոյ 22 Օգոստոս: - Մեծ Եպարզոք Յուլիս 31 ին ազատ թողուած բանտարկիւնները ձերբակալու տուաւ, իրենց գործած շատ մը ոճիւրներուն համար:

Կ. Պոլսոյ 24 Օգոստոս կառավարութիւնը պաշտօնեաներուն ամսականները զեղջեց:

Սուլթան Ահմէտի թաղը պատահած հրդեհի մը հետեւանքով 7000 հոգի անպատասպար մնացին: Կըսուի թէ՛ շատ մը ջրհանիկներ, կ'իւր եւ աղաքներ բոցերուն մէջ մնացած են:

Ս. Բէթէրպպուրի 25 Օգոստոս: - Գօլէրան կը տարածուի, Յուլիս 21 էն ի վեր 2024 դէպք եւ 900 մահ պատահած է:

Բ Ա Յ Պ Ա Տ Ա Ս Ս Ն

Քանի մը ազգեցիկ եւ դիրքի տէր ազգայիններ, որոց մէջ ազգային շրջանակի հեռիէն կամ մտէն չփոս մ ունեցողներ ալ կան, անցեալ շաբթու կառավարութեան դիմում ընելու իմ վերջնական որոշումս լրջ սեւով, սկսան ինձի հարցնել թէ՛ ինչո՞ւ պիտի ընեմ այդ դիմումը: Ինչո՞ւ չեմ համաձայնիր. ինչո՞ւ Պատ. Քաղաք. Ժողովը կամ Առաջնորդը եթէ իմ ձայնս լսել չեն ուզեր, Երեսփոխանութեան դիմում չեմ ընէր, ու օրէնքին կը դիմեմ:

Ես այդ հարցնողներուն, որոնք իմ համարումս կը վայելեն, եւ ուրիշներու ալ՝ որոնք իրենց հար-

ցումներով զիս ճանձրացուցին, ներկայ բաց պատասխանողս կուտամ պատասխան:

Թէ՛ ինչո՞ւ չեմ համաձայնիր: - Չեմ համաձայնիր, որովհետեւ տան եւ չորս ամիսէ ի վեր, ինձի եղած զրկանքները մասամբ դարմանելու համար գտնէ, Ազգ. իշխանութեան մօտ ըրած բոլոր դիմումներս նպատակաւոր դժուարութեանց բաղինցան:

- Չեմ համաձայնիր, որովհետեւ նախորդ Քաղաք. Ժողովը որ կը բաղկանար Ասով Ասլանեան, Մարտիրոս Արեան, Տր. Ն. Քէլէճեան եւ Յարութիւն Ճէպէճեան, իրենց հետ ունենալով Առաջնորդ եւ Առաջնորդական տեղապահ Տ. Յարութիւն Քէնյ, Յակոբեան եւն, իմ վրայ զործ դրուած մահափորձը քաջալերելէ յետոյ, տունիս մէջ եղած մօտ 2000 ոսկւոյ արժէքով անտիպ ձեռագիրներու եւ իրեղեններու դողալիւնը քաջալերելէ յետոյ, Առաջնորդարանի Արարելէն ստմարներուն հատար 6, երես 90 եւ թիւ 164 գրութեամբ մը եւ Առաջնորդին կնքով գրեթէ մահու վճիռ կարձակէին ինձի դէմ . . .

- Չեմ համաձայնիր, որովհետեւ յանրապետի բանտարկութենէս ազատուելէ յետոյ, ու թիւ 101-ու շարունակ, ամէն շաբթու արգի քաղաք. Ժողովին հրահանգներուն ամենայն համեստութեամբ ժամերով սպասելէս յետոյ, հայր կըրցած եմ գոյքերս ստանալու որոշում ձեռք բերել եւ այն ալ աւտարկուած եւ ճնշում բանեցուցուած է որ շտապած իրեղեններս եւ խորապէս վիրաւորուած պատուոյս դէմ ինքնապաշտպանութիւնս չ'վերապահելու համար առաջնորդարանին ստորագրութիւն տամ կանխաւ եւ ըստ այնի. . . ինչ որ տան ինձի . . . առեմ, առանց ինձի չը պատկանածները իրենց վերադարձնելու . . .

- Չեմ համաձայնիր, որովհետեւ մեր Գեր. Առաջնորդ Մ. վարդապետը, յետագայ երկու վերաբերիչ ուճով նամակները անողուտ զրկած է որոնք իւր պաշտօնական զեղծումներու նմոյշներ հրատարակութեան կուտամ:

Ահա այդ նամակները:

ԱՌՍՁՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՒ

Դիւան Քաղաք. Ժողովոյ Ազգ. Գաւառ. Վարչութեան Թիւ 239

Գահիրէ 2 Նոյմ. (ն. տ.) 1907

Մեծապատիւ Պ. Եղիշ Թորոսեան ի Քաղաքիս Մեծապատիւ սիրելի՛:

Երկուշաբթի, ամսուս ե ին (ն. տ.) կէսօրէն ետքը ժամը 2 ին, Քաղաքական Ժողովոյ որոշման համաձայն եւ Առաջնորդարանիս պատուիրակութեան միջոցաւ Ձեզ պիտի յանձնուին Ձեր սեփական գոյքերը, որոնք ժամանակին ըստ ցանկագրութեան յանձնուած էին Ձեր կրթման խնամակալ՝ Տիկին Մաքրուհի Ե. Թորոսեանի:

Կը յանձնարարենք այսու որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ Տիկին Մաքրուհի բնակարանը եւ յետ օրինական արձանագրութեան ստանալ Ձեր գոյքերը:

Ողջունելու հայրական սիրոյ եւ օրհնութեան Մնամ աղօթքարար Առաջնորդ Եգիպտոսի Հայոց ՄԿՐՏԻՉ Վրդ. ԱՂԱԻՆՈՒՆԻ Թիւ 278

Գահիրէ 6) 19 Նոյմ. 1907

Մեծապատիւ Պ. Եղիշ Թորոսեան ի Քաղաքիս Մեծապատիւ սիրելի՛:

Ձեզ ծանօթ պատճառաւ ամսուս 4 ին գոյքերուն Ձեզ յանձնուած տեղի

ունեցած չըլլալով, անոնք պիտի յանձնուին վաղն չորեքշաբթի, 7) 20 Նոյմ. կէս օրէն յետոյ ժամը 2 ին, Առաջնորդարանիս պատուիրակութեան միջոցաւ:

Կը յանձնարարենք հետեւաբար որ վաղն որոշեալ ժամուն ներկայ գտնուիք Տիկին Մաքրուհի Ե. Թորոսեանի բնակարանը եւ կ'անուարար արձանագրութեամբ ստանաք Ձեր գոյքերը:

Ողջունելու հայրական սիրոյ եւ օրհնութեան Մնամ աղօթքարար Առաջնորդ Եգիպտոսի Հայոց ՄԿՐՏԻՉ Վրդ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

Իսկ ուրիշ մեղանշումներն են:

1. 1906 Ապրիլ 6 ին երբ ինձի դէմ լարուած թակարակները ծանրակշիւ հանգամանք ստացած էին, գրեցի ինքեղբու որ իր հեղինակութիւնը գործածելով վերջ դնէ ծրարեալ ոճրոյս, եւ նոյն իսկ ինքեղբայր որ տունիս մէջ գտնուած եւ ընդհանրութեան օգտին հետ յարաբերութիւն ունեցող գոյքերը անմիջապէս հսկողութեան ներքեւ առնէ:

Գերազանցաբար հարցուց. - քանի՞ տարեկան ես:

- Քառասուն պատասխանեցի:

- « Ինչ որ պարած ես բաւական է » չըսէ՞ մի . . .

Բ. Առաջնորդարանի հեռաձայնով զիս խալիֆէի (մէնչիյէ) ստիկանութեան մատնեցին թէ՛ ես Սուլթանին դէմ գրգռելու հրատարակութիւններ կընեմ կոր . . .

Գ. Աղքատախնամ ընկերութեան մատակարար կատարարոյ Արտաշէս Յովսէփեանը թեւադրած էին որ զիս թունաւորէ, ինչ որ ըրաւ եւ ըրին, չ'յալողեցաւ ու չի յալողեցան . . .

Դ. Ձեռքնաւ եւ աներորդիս կանչելով կամ՝ երկուսեւ պատգամաւորներ զրկելով բանտարկութիւններ սերմանեցին, որպէսզի ընտանեկան անհամաձայնութիւններ տեղի ունենան . . . եւ կ'ընտուտութիւններ ծագին . . .

Ե. Տիկին Նուպար Բաշային մահուան առթիւ աղքատներ խնամելու համար արուած 500 ոսկիով դատարկապարտներ վարձեցին եւ համախոհներ ստեղծեցին, որպէսզի զիս ծաղրեն, նեղացնեն եւ հիւանդացնեն . . .

Զ. Ձիս թունաւորներով հեռանդացնել եւ Ապպախիէի հիւանդանոցին մէջ փակելէ յետոյ, երբ կինս կերթայ կը խնդրէ որ զիս արձակել տան յանկրաւի բանտարկութենէս, մեր քալիֆով յիշափոխականներէ բաղկացած Ասլանեան Քաղաք. Ժողովը եւ Առաջնորդը կը պատասխանեն թէ՛ « Եթէ երկու կուզէ՛ թող երթայ մէկուն մնանք մեքս ըլլայ . . . » Բայց չեմ զիս թէ՛ այդ քիւրք կազմողներուն բողոքին ալ - առանց բացառութեան մօրը, ըրովը, կնոյրը եւ աղապականի եթէ՛ այդ տեսակ թեւադրութիւն մը ուրիշ ժողովականներ ընէին, իրենք ինչ պիտի զգային, եթէ արժանապատուութիւն ունէին:

Մնացեալը յայտարարով:

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ Ե ԱՐՏՅԵ

ՍՓՈՓԱՆԻ

Կը լսենք թէ՛ Քաղաքիս երեւելիներէն Պետրոս Էֆ. Կարապետեան 20 ոսկի զրկած է արարկիրի առաջնորդին, կարօտելոց բաշխուելու համար:

ԹԱՏՐՈՆ

Նորակազմ Ազգային Բաֆիի թատերախումբը Առաջիկայ շաբաթ երեկոյ 29 Օգոստոս ներկայացում մը պիտի տայ: Հասցի Պոլսոյ Միացեալ ընկերութեան պիտի զրկուի:

ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՍ

Կեղծ բարեկամին խիստ շուրի
 անկեղծ բշկամիկն, սի'րեղիս
 Կեղծ բարեկամին հարուստին
 դարման չիկիր, սի'րեղիս
 Անգորքեակք քեզ կը մխե
 դաշտյնը մոտեն, սի'րեղիս
 Նորա դաշտյնի հարուստին
 դարման չիկիր, սի'րեղիս

Կեղծ բարեկամ, կամ ազգակալ
 սոսք փեքակ մ'են ամեն օր
 Կունենան իրենց մեջը
 քե մեղը, քե մեղու ամեն օր
 Չբաղձաւ ուսեց մեղրեկն
 մեղուն պարսուստ ամեն օր
 Թե խաչքի, լորս հարուստին
 դարման չիկիր, սի'րեղիս

Դարմանածիլ վարդի կուսակ
 կը բացուի մ'ոտ ամեն օր
 Քեզ հրաւեր կը կարդայ շար,
 հոսայ իւր վարդն ամեն օր
 Բայց քե ուզես հոսոսեզ գայն'
 փոռչե պարսուստ ամեն օր
 Թե խի, լորս հարուստին
 դարման չիկիր, սի'րեղիս

Ես եզկիկն (*) եւ թխր փեքերով
 կայրիւ, սակցուիւ ամեն օր
 Ժառանգեցի յազգակալսացս,
 ուր տուի ինձի ամեն օր
 Չգրային վարդ հասակիս
 հարուստեցին զիս ամեն օր
 Մոտ ազգակալի հարուստին
 դարման չիկիր, սի'րեղիս

(*) Մանօձ - Այս եղնիկը այն չէ որ
 եզկատուի մէջ անխոցաբար Տ. Եզկէ
 Թորոսեանի առեւը հիմնիվեր քանդողնե-
 բուն աշակցեցէ յետոյ Ամերիկա մեկնե-
 ցաւ նոր օրեր փնտաւելու համար . . .

ՅՕՒՈՒԱՆՔԱԳԻՐՆԵՐՈՒՆ

«Արշալոյս» ի յօդուածագիրնե-
 րէն ոմանք ձեռք բերուած ազա-
 տութեան համար, ուրախութիւն-
 նին չ'կարծեալով զսպել, կուզեն
 որ ամէն բան մէկ անգամէն ըսեն
 Իրաւունք ունին. սրտերնին աբրամ
 է' ինչպէս մերինը : Սակայն՝ էթէ
 կարելի է, առ այժմ թող չըջաւայ-
 եաց գտնուին քիչ մը, որովհետեւ
 պէտք է գիտնան թէ «Արշալոյս»
 երկու երեք շաբաթէ ի վեր թուր-
 քիոյ զանազան կողմերն ալ զ'կուսիլ
 սկսուած է, և շիտակ չ'պիտի ըլլայ
 տրուած ազատութիւնը չարաչար
 գործածել ուղղանքուն կարգը
 դասուելու ստիպել մեզ : Ըսել կու-
 ղենք թէ՛ յօդուածագիրները Օր-
 թա - Իւրեղէն աւելի վեր ելլելու
 յօդուածիւնը յանձն թող չաւենն
 առ այժմ, ինչպէս կընեն Պօլսոյ
 թերթերը : Անշուշտ ասոնք պատ-
 ճառ մը ունին, որ տակաւին ան-
 ծանօթ կ'մնայ մեզի :

ԽՄԲ.

ՍՈՎԸ ԱՐԱՅԿԻՐԻ ԵՒ ԱԿՆԱՅ ՄԷՉ

Արաբկիրէն և Ակնէն եկած
 վերջին լուրերը այն աստիճան սրբ-
 տաճմիկ են, որ անսոր առջև ան-
 տարբեր մնալը ոճրագործութիւն
 պիտի ըլլայ :

«Արեւելք» ի 6860 թիւ թերթին
 մէջ կը գրէ, «չառ ընտանիքներ
 իրենց բարձրուն մէջէն խոտեր

հանելով ապուր կը պատրաստեն
 եղեր իրենց փոքրիկները սովամա-
 հու թենէ ազատելու համար :

Իսկ եկած վերջին նամակնե-
 բուն մէջ չեն պակիր այս կարգի
 հարեւաւոր օրինակներ և որոնցմէ
 գոնէ մին հոս յիշատակել աւելորդ
 չեմ սեպեր, չորս փոքր զաւակնե-
 բուն տէր մայր մը երկու օր իւր
 զաւակներով անուաղ անցնելէ
 վերջ՝ կէս դահ. մը կուենայ (20
 փարա) և անով պատառ մը հաց
 գնելով կը բաժնէ իւր զաւակաց-
 երը զաւակները կը հարցնեն. մայ-
 րիկ ալ չկայ, չկ'առաջանք. իրենց
 մօր բացասական պտտախանին վը-
 րայ անոնցմէ երկուսը մին 7 և միւ-
 սը 9 տարեկան, յանկարծ կը խե-
 լագարին :

Թո՛ղ եզկատու գտնուող հայ-
 րեր ու մայրեր, աչքի առջև բե-
 րեն իրենց փոքրիկները. «հայրի՛կ
 անօթի՛ եմ. . . մայրի՛կ հաց կու-
 ղեմ՛» . . . և ըստ այնմ ձեռքեր-
 նին գրպանին ասնին իրենց լու-
 ման նստիւնու համար :

Թո՛ղ եզկատուի հայրենակից-
 ները պահ մը ինքզինքնին հայրե-
 նիքի սովատանջ վայրերու վրայ
 երեւակայն և ըստ այնմ չափեն մեր
 սիրելի արեւակիցներու դժօրմբեր
 կացութիւնը :

Թո՛ղ եզկատուի ազատ ջնուղ
 հայութիւնը հաւատայ որ, հայրե-
 նիքի ազատութեան արեւը անոնց
 գերեզմաններու վրայ պիտի ցոլայ՝
 եթէ ուշացնենք մեր օգնութիւն-
 ները :

Այս առթիւ տեղւոյս Առաջ-
 նորդարանը երկու մասնախումբ
 կազմած է, մին Արաբկիրի և միւսն
 Ակնայ համար հանգանակութեան
 ձեռնարկելու. աւելորդ չպիտի ըլ-
 լար իմ կողմէ խնդրել այս երկու
 մարտիներուն, որպէսզի իրենց գո-
 յութիւնը պահեն գոնէ վեց ամիս
 և յորտակ աշխատութեամբ մը հե-
 տըջնեան նոր հասոյթի աղբիւրներ
 ստեղծելով՝ յառաջիկայ ձմեռն հա-
 մար պաշար հայթայթել այն եղկե-
 լի արաբաններուն, որոնց մօտաւոր
 ապագան, այսինքն վրայ հասնող
 ձմեռը՝ աւելի ահաւելի սպառնալի-
 քով մը կը մօտենայ, քանի որ այս
 տարուայ հունձքը անբաւական է և
 սովորական 10 - 12 դահ. եղած չափ
 մը ցորենը 36 - 38 դահ. ի բարձ-
 րացած է :


Թո՛ղ մեր երկու մասնախումբ-
 քերը մեծամեծ ձեռնարկներու հա-
 մար միանան և աւելի ևս արգիւ-
 նաւորեն իրենց գործունէութիւնը :

Եզկատուի հայութիւնը այժմ
 իրաւունք ունի հարցնելու թէ՛ ո՞ր է
 Հ. Բ. Ը. Միութիւնը, որուն գոյու-
 թիւնը կը նշանակէ գաղթեցնել ժո-
 զովորեան մօտ մասնակի դիմում-
 ներ և հանգանակութիւններ ընելը.
 սակայն մենք ալ իրաւունք ունինք
 նկատել տալու որ, երբ ամիսներ
 առաջ, առաջին անգամ սովի գոյ-
 ժըն առինք. դիմեցինք Ընդհ. Միու-
 թեան անմիջական օգնութիւն խնդ-
 րելով և Ը. Միութիւնը մինչև որ
 ժողով գումարեց, որոշում տուաւ,
 շաբաթներ վերջ հազիւ կրցաւ 30
 ոսկի մը Արաբկիրի սովելոց բաժին

հանել, ինչ որ կը տեսնուի տար-
 ւոյս տեղեկագրին մէջ. 30 ոսկի .
 2500 հայ տուներէ բաղկացեալ
 սովեալ բնակչութեան մը համար .
 սակայն չմոռնամ ըսել որ Ը. Միու-
 թեան գանձն ալ ատկէ աւելին չէր
 խօստանար. նա ամեն օր ունի ճամ-
 բելիք տեղեր ու կը ճամբէ. ուրե-
 մըն եզկատուի հայութիւնը թո՛ղ ի
 նկատի առնէ թէ, հիմա ատենը չէ
 Ը. Միութեան դիմելու, որոց ան-
 գամները մեծագոյն մասամբ բա-
 ցակայ են և որոշում մը յապաղման
 պիտի ենթարկուի. այլ՝ անմիջական
 օգնութիւն մը անհրաժեշտ է փրկե-
 լու համար մեր մայրերն, քոյրերն
 ու եղբայրներն դաժան և ստոյգ
 մահու ճիրաններէն :

Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
 Դահլիճէ 22 Օգոստ.
 1908

ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԴ



ՏԻԿԵՆ ԼՈՒՍՈՒԿ Գ . ՉՕԼԱՔՕԾ
 ՍՈՒՍԲԻ ԿՐԱ ՍԻՆՔԵՅԻՆ
 ԼԱՏԻՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅԵՆ
 ՃԻՇՏ ԴԻՄԱՅԸ
 ԱՐՈՒՍԱՍԱԿԱՆ ԾԱՂԿԵՐՈՒ
 ԱՊԵԼՐՅԵ
 Հարանեկան գե-
 ղակազմ պուզներու,
 շքեղ ծաղիկեղոյներու,
 պսակներու և բոլորի
 (չափազ) հրաշագեղ ծաղիկներ ունենա-
 լու համար մի գիտէք այլուր :

Մեր գիները դիւրամատչելի են և
 ապրանքները անմրցելի :
 Փորձի համար անգամ մը այցելու-
 դը, ապահովագէտ մեր մնայուն յաճա-
 խորդը պիտի ըլլայ :
 Մեր տարիներու փորձառութիւնը
 այսպէս ըսել կուտայ մեզի :

31-43 ՏԻԿ . Լ . Գ . ՉՕԼԱՔՕԾ

ՍԵՂԱՆԱՅԻՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց քիւ 6, Սիմիլի մասնա-
 ձիւղին լու, Ժիւսքի դիւստ :

Կը գնէ հի կը ծախէ հրապարակի
 վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժե-
 թիւները, մասնաւորաբար Բրէտի Ֆօն-
 սիէի հին և նոր, Բուսիլի երկաթուղ-
 եաց և Բանամայի ֆրանսական վաւե-
 րացնալ արժեթիւղները, որոնց սկզբն
 ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն
 ալ ունի :

Արժեթիւղներու արգի իրատ նպաս-
 տաւոր գնեցնել կրնան օգտուիլ եզկա-
 տարնակ մեր ազգայինները մեզի դի-
 մելով :

Մասնավճարներով - 25, 50, 100-
 կարելի է արժեթիւղներու տիրանալ, և
 մատչելի պայմաններով՝ աւանդի փո-
 խարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ
 գործառնութեանց, և աւելարտական
 ամին կարգի Պօնօնեզ գեղջիւու պատ-
 րաստակամութիւն :

Սեղանաւորական և Պօրսոյի գոր-
 ծառնութիւններ և այլ կարգի գոր-
 ծերու վերաբերեալ գաւառներէն եղած
 յանձնարարութիւններ փութով կը կա-
 տարին :

Բուսիլի երկաթուղոյ վիճակա-
 հանութեանց պանջ Օթօմանէն երաշ-
 խաւորեալ և վաւերացեալ քրօնկաներէն
 գնել ուղղութեան համար լաւ պատե-
 հոթիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ
 պանջ Օթօմանէն ուղղակի կստանանք
 յիշեալ քրօնկաները : 12-50
 ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԱՆ

ԿԱՍԱԶԱՆ

Ամսոյս 20 ին կառավարչատան
 բանտին մէջ գործադրուեցաւ մահու
 պատիժը կախաղանի միջոցաւ Պետրոս
 Հիւսնեան սճրագործին, որ Պ. Ար-
 փիւր Արփիարեանը սպաննած էր
 տարւոյս Յունուար ամսուն մէջ :

Էթիօթ հետեւեալ կերպով կը
 պատմէ մահավճռոյն գործադրու-
 թիւնը իր 21 Օգոստոսի թուոյն մէջ :

Ներէկ կառավարչատան շրջա-
 կայքը չէր ընծայէր ամբոխի այն սո-
 վորական տեսարանը, որ ամէն ան-
 գամ կը նշմարուի երբ մահու պա-
 տիժ մը տեղի կուենայ. անշուշտ ա-
 նոր համար որ գատապարտեալը օտա-
 րական մ'էր, և հոս ո՛չ ազգական և
 ո՛չ բարեկամ սենէր իր վրայ լացող,
 նոյն իսկ Ձինթլ ԻրէնՅ ԱՏԵԼՈՒԹԵՍՆՅ
 եի ԿԻՐԲԵՐՈՒՆ ԾԱՌԱՅՅՆՈՂՆԵՐՆ
 ԱԼ բացակայ էին : Միայն ծերունի
 հայ տէրտէր մը Մամբրէ Բահանայ
 վարդանեան երկու տիրացուներու
 հետ, ժամը 8 ու կէսին բանտին շրջա-
 պատէն ներս մտաւ. դատապարտեալին
 վերջին միթմարութիւնները տալու :
 Դուրսը տամի չափ օրագրողներ կա-
 յին : Բայց ահա շարժում մը առաջ
 կուգայ ընդհանուր ապահովութեան
 նրաւնցքներու մէջ, պաշտօնեաները
 և ոստիկանները գէպի արգելանոցը
 կուղլուին Բէ. քսթէն և Էփաթ պէյե-
 բու առաջնորդութեամբ, որովհետեւ
 գործողութեան ժամը մօտեցած էր :
 Յետոյ ամէն մարդ սև ու ցուրտ սա-
 լարկներով չարաչուք սենեակէն ներս
 կ'մտնեն ուր քանի մը բոպէ ետք դա-
 հիճը Աշմաուի և իր երկու օգնական-
 ները հրապարակագիր Արփիարեանը
 սպաննող Պետրոս Հիւսնեանը կը բե-
 րէն, որպէսզի իր պարտքը վճարէ
 ընկերութեան :

«Շատ հանդարտ, ճակատ բար-
 ձր, դատապարտեալը հաստատ քայ-
 լերով կը քալէ դէպի կախաղան և կը
 կենայ չուանին տակ, առանց դէմքի
 ամենափոքր այլայլութեան՝ որ իր
 վախը կամ յուզումը մատնէր :
 Ոճրագատ ատենի առջև ունեցած
 նոյն դիւքն էր, երբ թարգմանը
 իրեն իմացուց մահուան դատապար-
 տուած ըլլալը :

«Իրաւամբ Պետրոս Հիւսնեան
 մինչև ոճիրի գացող մոլեռանդ ա-
 ռաքեալն է, բայց հաւատարիմ այն
 դատին զոր ինք նուիրական կը կար-
 ծէ : Բիչ առաջ ըսած է քահանա-
 յին՝ որ իրեն խրատ կուտար քաջ
 ըլլալու. «Արփիարեանը զոր սպան-
 նեցի, չէի ճանչնար և երբէք չէի
 տեսած : Ինձի ըսին որ հայ յեղա-
 փոխական գօմիթիւներուն գործերը
 կը քննադատէր և թէ բռնակալին
 ծախուած էր : Ձինքը սպաննեցի
 հայ աղքը ազատելու համար թըշ-
 նամիէ մը, բայց չէի գիտեր որ ընդ-
 հակառակը պարկեշտ մարդ մ'էր :»

«Արագ շարժումով մը դահի-
 ճը չուանը կանցնէ գատապարտեա-
 լին վիզը, մինչ մուսլ լուութեան
 մը մէջ գատարանի պաշտօնեան կը
 կարդայ ոճրագատ ատենին վճիռը :
 Այս ձեակերպութիւնը լրանա-
 լէ յետոյ, քանի մը վայրկեան կը

